https://doi.org/10.46991/hc.2023.19.1.113

Japan's policy in the South Caucasus (1992-2022)

Yeva Harutyunyan
https://orcid.org/0000-0002-1455-697X
PhD in History, senior researcher, Scientific Secretary of the Institute of Oriental studies of National Academy of Sciences of Armenia
yeva.harutyunyan85@gmail.com

Keywords: Japan, South Caucasus, policy, Central Eurasia, Artsakh (Nagorno Karabagh) issue, Abkhazia issue, South Ossetia issue, economic policy.

The region of South Caucasus due to its geographical position and energy carriers possession has a strategic importance, being situated in the center of Eurasia continent and being the most important pivot connecting Asia with Europe. Japan considers the South Caucasus as a part of Central Eurasia and it is greatly interested in establishing peace and stability in the region. Japan's position towards the conflicts of the South Caucasus is in line with the Western states, in particular, in the issue of the resolution of Nagorno Karabakh conflict, it gives priority to the OSCE Minsk Group's activities and supports the early peaceful settlement of the conflict, while in the issues of Abkhazia and South Ossetia, Japan supports the preservation of the territorial integrity of Georgia.

In the article the development trends of Japan's foreign policy in the South Caucasus as a part of Central Eurasia continent were presented in four stages of development:

1. *The phase of familiarization and establishment of diplomatic relations (1991-1996),*
2. *"Eurasian" or "Japanese Silk Road" conceptual policy (1997-2003),*
3. *Conceptual policy of "Central Asia plus Japan" dialogue (2004-2018),*
4. *"Japan's Caucasus Initiative" policy (from 2018 till now).*

Japan implements its economic policy towards the South Caucasus states through the ODA program, providing bilateral and multilateral aid for developing the target sectors in three republics of the region.

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 113-134
Received: 27.01.2023
Revised: 12.03.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Ճապոնիայի քաղաքակությունը Հարավային Կովկասում (1992-2022 թթ.)

Եվա Հարությունյան

պ.գ.թ., ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար

Բանալի բառեր՝ Ճապոնիա, Հարավային Կովկաս, Կենտրոնական Եվրասիա, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հիմնախնդիր, Աբխազիայի հիմնախնդիր, Հարավային Օսեթիայի հիմնախնդիր, տնտեսական քաղաքականություն:

Հարավային Կովկասն իր աշխարհագրական դիրքով և էներգակիրների առկայությամբ ունի կարևոր ռազմավարական նշանակություն՝ գտնվելով Եվրասիա մայրցամաքի կենտրոնում և հանդիսանալով Ասիան Եվրոպային կապող կարևորագույն առանցք: Ճապոնիան Հարավային Կովկասի նկատմամբ իր արտաքին քաղաքականությունը ձևավորելիս դիտարկում է այն՝ որպես Կենտրոնական Եվրասիայի մասնիկ և մեծապես շահագրգռված է տարածաշրջանում շուտափույթ խաղաղության և կայունության հաստատման հարցում: Ունենալով արևմտյան երկրների դիրքորոշմանը համահունչ դիրքորոշում Հարավային Կովկասում առկա հակամարտությունների նկատմամբ, մասնավորապես՝ Արցախի հիմնախնդրի լուծման հարցում կարևոր տեղ է տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությանը և կողմնակից է հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորմանը, մինչդեռ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնախնդիրներում կողմակից է Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանմանը:

Հոդվածում ուսումնասիրության առարկա է դարձել Ճապոնիայի արտաքին քաղաքականության զարգացման միտումները Հարավային Կովկասում՝ որպես Կենտրոնական Եվրասիայի մասնիկ, որոնք ներկայացվել են զարգացման չորս փուլով՝

1. 1991-1996 թթ. ծանոթացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման փուլ,

2. 1997-2003 թթ. «Եվրասիական» կամ «Ճապոնական Մետաքսի Ճանապարհ» հայեցակարգային քաղաքականություն,

3. 2004-2018 թթ. «Կենտրոնական Ասիա գումարած Ճապոնիա» երկխոսության հայեցակարգային քաղաքականություն,

4. 2018 թվականից մինչ օրս՝ «Ճապոնիայի Կովկասյան նախաձեռնություն» քաղաքականություն:

Ճապոնիան իր տնտեսական քաղաքականությունը Հարավային Կովկասի երեք պետությունների նկատմամբ իրականացնում է ՊԶԱ ծրագրի միջոցով՝ տրամադրելով երկկողմ և բազմակողմ աջակցություն, որը միտված է երեք հանրապետություններում առկա թիրախային ոլորտների զարգացմանը:

Политика Японии на Южном Кавказе (1992-2022 гг.)

Ева Арутюнян
кандидат исторических наук, старший научный сотрудник, ученый секретарь Института Востоковедения Национальной Академии наук Армении

Ключевые слова: Япония, Южный Кавказ, Центральная Евразия, проблема Арцаха (Нагорный Карабах), Абхазская проблема, Северно-Осетинская проблема, экономическая политика.

Регион Южного Кавказа, благодаря своему географическому положению и наличию энергоносителей, имеет важное стратегическое значение, находясь в центре Евразийского континента и, являясь важнейшей осью, соединяющая Азию с Европой. Япония, формируя свою внешнюю политику в отношении Южного Кавказа, рассматривает последнего как часть Центральной Евразии и очень заинтересована в скорейшем установлении мира и стабильности во всем регионе. Являясь приверженцем позициям западных стран в отношении конфликтов на Южном Кавказе, в частности, в разрешении Нагорно Карабахской проблемы, Япония отводит важное место деятельности Минской группы ОБСЕ и выступает за скорейшее мирное урегулирование конфликта. Касательно проблемы Абхазии и Южной Осетии, Япония является сторонником сохранения территориальной целостности Грузии.

В статье были рассмотрены тенденции развития внешней политики Японии на Южном Кавказе, как часть Центральной Евразии, которые были представлены четырьмя этапами развития:

1. 1991-1996 гг. этап ознакомления и установления дипломатических отношений,

2. 1997-2003 гг. концептуальная политика «Евразийского» или «Японского Шелкового пути»,

3. 2004-2018 гг. концептуальная политика диалога «Центральная Азия плюс Япония»,

4. с 2018 года по настоящее время политика «Кавказская инициатива Японии».

Япония реализует свою экономическую политику в странах Южного Кавказа посредством программы Официальной помощи развития, предоставляя двустороннюю и многостороннюю помощь для развития целевых секторов в трех республиках.

* * *

Ներածություն: Հարավային Կովկասն իր աշխարհագրական դիրքով և էներգակիրների առկայությամբ ունի ռազմավարական նշանակություն: Այն կարևորագույն միջանցք է Եվրասիա մայրցամաքի կենտրոնում և հանդիսանում է Ասիան Եվրոպայի հետ կապող առանցքային դարպաս: Ճապոնիան, լինելով մինչև 2010 թ. ամենամեծ տնտեսական գերտերությունը, իսկ մինչ օրս համարվելով երրորդ գերտերությունն աշխարհում, իր տնտեսական շահերի ապահովման և համաշխարհային տնտեսության կայունության պահպանման տեսանկյունից շահագրգռված է տարածաշրջանում շուտափույթ խաղաղության և տնտեսական կայունության հաստատման հարցում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիան իր արտաքին քաղաքականության մեջ որդեգրեց 3 հիմնական սկզբունքներ՝

1. ՄԱԿակենտրոն քաղաքականության իրականացում,

2. համագործակցության հաստատում ժողովրդավարական երկրների հետ, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և այլ դաշնակիցների հետ,

3. Ասիական երկրների հետ հարաբերությունների ամրապնդում [Hosoya, 2011]:

Հատկանշական է, որ մինչ 1990 թ. «Ասիական երկրներ» հասկացության մեջ Ճապոնիան ներառում էր միայն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներին, սակայն հետսառըպատերազմյան շրջանում Ճապոնիան ընդլայնեց «Ասիական երկրներ» հասկացողության* աշխարհագրությունը՝ ներառելով նաև հին «Մետաքսի Ճանապարհի» վրա տեղեկայված բոլոր ասիական երկրներին (Հարավ–Արևմտյան և Կենտրոնական Ասիայի երկրներին), հետագայում՝ Իսլամական Ասիային [Yuasa, 2007, 76]:

Դիտարկելով Հարավային Կովկասը՝ որպես ընդարձակ Կենտրոնական Եվրասիա* տարածաշրջանի մասնիկ, Ճապոնիան սկզբնական փուլում մեծ տեղ էր տալիս Հարավային Կովկասում՝ Հայաստանի, իսկ Կենտրոնական Ասիայում՝ Ղազախստանի հետ հարաբերությունների ամրապնդմանը [Nazarmuhamedov, 2018, 170]: Թեև դիվանագիտական հարաբերությունների սկիզբը թե' Հայաստանի և թե' Ղազախստանի հետ դրվեցին Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, սակայն Ճապոնիայի դիվանագիտական ներկայացուցչությունը Կենտրոնական Ասիայի երկրներից առաջինը բացվեց Տաշկենտում, այնուհետև՝ Ալմա-Աթայում, Դուշանբեում, և ի վերջո 2003 թ.՝ Բիշքեկում, մինչդեռ Հարավային Կովկասի երկրներից ամենաուշը բացվեց Երևանում՝ 2015 թ.:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Ճապոնիայի քաղաքականությունը և արտաքին քաղաքական միտումները Հարավային Կովկասում, լուսաբանել Ճապոնիայի դիրքորոշումը տարածաշրջանում առկա հակամարտությունների նկատմամբ, ինչպես նաև վերլուծել Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրներում:

Ճապոնիայի արտաքին քաղաքականության միտումները Հարավային Կովկասում: Երկկողմ դիվանագիտական հարաբերությունները հաստատելուց մինչ 1996 թ. Ճապոնիայի քաղաքականությունը հետխորհրդային երկրների նկատմամբ կրում էր ճանաչողական բնույթ: Ճապոնիան տրամադրում էր տնտեսական աջակցություն տարածաշրջանի նորանկախ պետություններին՝ ցանկանալով աջակցել վերջիններին պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության սահուն անցմանը:

Ճապոնիան իր արտաքին քաղաքականության մեջ Հարավային Կովկասը դիտում է որպես Կենտրոնական Եվրասիա տարածաշրջանի մաս և հետևաբար ձևավորում է մեկ ընդհանուր հայեցակարգ վերոնշյալ տարածաշրջանի համար: Այսպես՝ 1997 թ. Ճապոնիայի վարչապետ Ռ. Հաշիմոտոն ազդարարեց «Ճապոնական մետաքսի ճանապարհ» (կամ Եվրասիական)

---

* «Ասիական երկրներ» հասկացողությանն առաջինն անդրադարձ է կատարել Մոթեգի Տաշիմիցուն՝ լինելով Ճապոնիայի արտգործնախարար Կավագուչիի օրոք փոխնախարար:

* «Կենտրոնական Եվրասիա» տերմինը դիտարկվում է որպես աշխարհագրական տարածք, որն իր մեջ ներառում է Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրները:

դիվանագիտության ձևավորման մասին: Եվրասիական դիվանագիտության շնորհիվ Ճապոնիան ցանկանում էր համագործակցության ուղիներ փնտրել հետխորհրդային երկրների հետ, ինչպես նաև բարելավել հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ վերջինիս դիրքերն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ամրացնելու միջոցով [Казухито, Евразийская дипломатия Японии (1997-2001 гг.); Dadabaev, 2013, 515]: Վարչապետ Ռ. Հաշիմոտոն համոզված էր, որ ժամանակն է, որպեսզի Ճապոնիան ստեղծի նոր Եվրասիական դիվանագիտություն, որը կուղղորդվի ոչ թե Ատլանտյան, այլ Խաղաղ օվկիանոսից և որտեղ կկարևորվի Ճապոնիայի դերը [Len, 2008, 31]: Հատկանշական է, որ Ճապոնիան ցանկանում է խաղալ տարածաշրջանում առաջատար դեր՝ առանց ստորադասելու տարածաշրջանի այլ խաղացողների շահերը:

2001 թ. սեպտեմբերի 11–ի դեպքերից հետո Ճապոնիան տարրորոշեց երեք ուղղություն Կենտրոնական Եվրասիա տարածաշրջանի երկրների հետ համագործակցություն հաստատելու համար՝

1. հաստատել քաղաքական երկխոսություն՝ երկկողմանի վստահությունը միմյանց նկատմամբ ամրապնդելու նպատակով,
2. տրամադրել տնտեսական աջակցություն[1*],
3. նպաստել խաղաղության կառուցմանը՝ միջուկային զենքի չտարածման, ժողովրդավարացման և կայունության հաստատման սկզբունքների գերակայությամբ (Diplomatic Bluebook, 2002, 180):

2004 թ. Աստանայում Ճապոնիայի արտաքին գործերի նախարար Կավագուչին հայտարարեց «Կենտրոնական Ասիա զումարած Ճապոնիա» երկխոսության հայեցակարգի ձևավորման մասին, որին հաջորդեց Ճապոնիայի Արտաքին գործերի նախարարությունում «Կենտրոնական Ասիա և Կովկաս» բաժանմունքի բացումը [Nazarmuhamedov, 2018, 171]:

2006 թ. Ճապոնիայի վարչապետ Տարո Ասոն առաջարկեց «Ազատության և բարեկեցության կամար» նախաձեռնությունը, որտեղ կարևոր տեղ տրվեց մի շարք երկրների հետ ժողովրդավարական արժեքների շուրջ համախմբմանը և հարաբերությունների բարելավմանը (On the "Arc of Freedom and Prosperity"..., 2017]:

Արդեն 2018 թ. Ճապոնիան սկսեց դիտարկել Հարավային Կովկասը՝ որպես առանձին քաղաքական միավոր և իր արտաքին քաղաքականության մեջ ձևավորեց «Ճապոնիայի Կովկասյան նախաձեռնությունը», որը բաղկացած է երկու քաղաքական բաղադրիչից՝

(1) աջակցության տրամադրում՝ պետականաշինության նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման համար,

(2) աջակցության տրամադրում՝ դեպի «Բողոքող Կովկաս» ճանապարհ հարթելու նպատակով՝ ցանկանալով այդպիսով զարգացնել տարածաշրջանում առկա ենթակառուցվածքները և բարելավել գործարար միջավայրը [Diplomatic Bluebook, 2019, 138].

Հատկանշական է, որ Հայաստանն առաջին պետությունն էր Հարավային Կովկասում, որի հետ Ճապոնիան կնքեց ազատականացման և ներդրումների վերաբերյալ պայմանագիր (2018 թ. Փետրվար) [Agreement between Japan and the Republic of Armenia for the Liberalization, Promotion and

[1*] 2004 թ. Ճապոնիան իր Եվրասիական դիվանագիտության մեջ տնտեսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ 2-րդ հիմնադրույթը վերաձևակերպեց «Տնտեսական և ռեսուրսների զարգացման շուրջ համագործակցության» հիմնադրույթով [Diplomatic Bluebook, 2005, 92-93)

Protection of Investment]: Արդեն 2021 թ. նմանատիպ պայմանագիր Ճապոնիան կնքեց նաև Վրաստանի հետ [Entry into Force of the Japan-Georgia Investment Agreement], իսկ 2022 թվականին՝ Ադրբեջանի [Signing of the Tax Convention between Japan and Azerbaijan]: Բացի այդ, 2018 թ. սեպտեմբերի 2-7-ը պատմության մեջ առաջին անգամ Ճապոնիայի արտգործնախարարը պաշտոնական այցելություն ունեցավ Հարավային Կովկասի երկրներ [Foreign Minister Kono Visits Armenia, Georgia, Azerbaijan and Germany (September 2-7, 2018)]:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Ճապոնիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ որպես Կենտրոնական Եվրասիայի մասնիկ անցել է զարգացման չորս փուլ՝

1. 1991-1996 թթ. ծանոթացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման փուլ,
2. 1997-2003 թթ. «Եվրասիական» կամ «Ճապոնական Մետաքսի ճանապարհ» հայեցակարգային քաղաքականություն,
3. 2004-2018 թթ. «Կենտրոնական Ասիա գումարած Ճապոնիա» երկխոսության հայեցակարգային քաղաքականություն,
4. 2018 թվականից մինչ օրս՝ «Ճապոնիայի Կովկասյան նախաձեռնություն» քաղաքականություն:

Ճապոնիայի դիրքորոշումը Հարավային Կովկասում առկա հակամարտությունների նկատմամբ: Հարավային Կովկասում մինչ օրս գոյություն ունեն երեք չլուծված հակամարտություններ, դրանք են՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) ինքնորոշման համար մղվող պայքարը, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հիմնախնդիրները:

Ճապոնիայի դիրքորոշումն այս երեք հիմնախնդիրների նկատմամբ հասկանալու համար դիտարկել ենք Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության կողմից հրատարակվող ամենամյա զեկուցագրքերը՝ «Դիվանագիտական կապույտ գիրք» ("Diplomatic Bluebook"): Ճապոնիան Հարավային Կովկասի երկրներում տեղի ունեցող քաղաքական զարգացումներն իր ուշադրության ուղեծիրում է պահում 1995 թվականից սկսած՝ ներկայացնելով հետխորհրդային պետություններում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները «Նոր անկախացած պետություններ» կոչվող ենթաբաժնում: 2003 թվականից Ճապոնիան սկսեց դիտարկել Հարավային Կովկասը՝ որպես առանձին քաղաքական միավոր՝ հատկացնելով վերջինիս առանձին ենթաբաժին [Diplomatic Bluebook, 2004, 111-112]:

Ուսումնասիրելով Ճապոնիայի դիրքորոշումը Հարավային Կովկասում առկա հակամարտությունների վերաբերյալ՝ նշենք, որ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հիմնախնդիրը ներկայացված է որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող հակամարտություն, որը պատճառ դարձավ Խորհրդային Միության փլուզման համար: Որպես հակամարտության պատճառ նշվում է հայերով բնակեցված Արցախը, որը ցանկանում էր փոխել իր պատկանելիությունն Ադրբեջանից Հայաստան: «Դիվանագիտական կապույտ գրքում» ներկայացվում է, որ Հայաստանը 1993 թ. բռնագրավել է Արցախը և շրջակա 7 տարածքները, և արդեն 1994 թ. Ռուսաստանի ու Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) միջնորդությամբ հրադադար է կնքվել Հայաստանի և Ադրբեջանի

միջև [Diplomatic Bluebook, 2006, 100-101]: Ճապոնիան խնդրի լուծման հարցում կարևոր տեղ է տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությանը և կողմնակից է հակամարտության խաղաղ կարգավորմանը:

2020 թ. 44-օրյա պատերազմի ժամանակ Ճապոնիայի Արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով կողմերին վերականգնել խաղաղությունը և տարածաշրջանային կայունությունը [The Armed Confrontation along the contact line of Nagorno-Karabakh (Statement by Press Secretary Yoshida Tomoyuki)]: Ադրբեջանը Շուշի - Քարին տակ խաչմերուկի հատվածից, որը գտնվում է Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի խաղաղապահ առաքելություն ստանձնած զորքերի պատասխանատվության գոտում, 2022 թ. դեկտեմբերի 12-ից փակել է Արցախը Հայաստանին կապող միակ «կյանքի ճանապարհը»՝ ստեղծելով հումանիտար ճգնաժամ 120.000 արցախցի բնակիչների համար: Արցախի շրջափակման կապակցությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Մասանորի Ֆուկուշիման՝ կոչ անելով ադրբեջանական կողմին ապահովել Բերձորի (Լաչինի) միջանցքի երկայնքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը (Հայաստանում Ճապոնիայի դեսպանը կոչ է արել ապահովել Լաչինի միջանցքի երկայնքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը]:

Ինչ վերաբերում է Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնախնդիրներին, ապա Ճապոնիան կողմնակից է Վրաստանի տարածքային ամբողջականությանը: 2008 թ. օգոստոսին Վրաստանի և Հարավային Օսեթիայի միջև տեղի ունեցած ռազմական բախումը, որով Հարավային Օսեթիան նպատակ էր հետապնդում անկախանալ Վրաստանից, պատճառ դարձավ ռուս-վրացական կարճատև պատերազմի սկսմանը: Ճապոնիան դատապարտեց Ռուսաստանի ներգրավվումը պատերազմի մեջ, ինչպես նաև Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ընդունումը վերջինիս կողմից: (Statement by Mr. Masahiko Koumura, Minister for Foreign Affairs, on the Situation in Georgia and South Ossetia; Statement by Mr. Masahiko Koumura, Minister for Foreign Affairs, on Russia's Recognition of the Independence of South Ossetia and Abkhazia]: Մինչ օրս էլ խնդրի լուծումը դիտարկելով Վրաստանի տարածքային ամբողջականության տիրույթում՝ Ճապոնիայի կառավարությունը 2022 թ. մարտ և ապրիլ ամիսներին համապատասխանաբար Աբխազիայում տեղի ունեցած խորհրդարանական, իսկ Հարավային Օսեթիայում՝ նախագահական ընտրությունները հայտարարեց ոչ լեգիտիմ (Statement of the Embassy of Japan in Georgia on the so-called "parliamentary elections" in Abkhazia; Statement of the Embassy of Japan in Georgia on the so-called "presidential elections" in Tskhinvali/South Ossetia]:

Այսպիսով, հարավկովկասյան հակամարտություններում Ճապոնիայի դիրքորոշումը մոտ է Արևմտյան երկրների դիրքորոշմանը: Ունենալով տարածքային տարաձայնություններ Ռուսաստանի հետ՝ Ճապոնիան դեմ է Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում և շահագրգռված է Հարավային Կովկասում շուտափույթ խաղաղության և կայունության հաստատման հարցում: Իր գործոնն այդ խնդրի լուծման մեջ տեսնում է հարավկովկասյան երեք երկրներին տնտեսական աջակցության, ենթակառուցվածքների զարգացման և գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև պետակաշինության նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրներում: Ճապոնիան իր տնտեսական քաղաքականությունն իրականացնում է Պաշտոնական զարգացման աջակցության (ՊԶԱ) ծրագրի[1*] միջոցով:

Ճապոնիայի ՊԶԱ նախագիծն իր մեջ ներառում է 2 տեսակի աջակցություն՝ *բազմակողմանի աջակցություն* և *երկկողմանի աջակցություն*: ***Բազմակողմանի աջակցությունը*** տրամադրվում է միջազգային բանկերի և կազմակերպությունների միջոցով, որոնց անդամակցում է և մեծածավալ ներդրումներ է կատարում Ճապոնիան: Ինչ վերաբերում է ***երկկողմանի աջակցությանը***, ապա այն տրամադրվում է կառավարության կողմից մեկ այլ կառավարությանը: Երկկողմանի աջակցությանը լինում է երկու տեսակի՝ **երկկողմանի փոխառության** և **երկկողմանի դրամաշնորհների (կազմված են՝ դրամաշնորհային օգնությունից և տեխնիկական աջակցությունից)** տեսքով: Մինչ 2008 թ. երկկողմանի դրամաշնորհները ֆինանսավորվում էին Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության (ՃՄՀԳ) (JICA), իսկ փոխառությունները՝ Ճապոնիայի Միջազգային Համագործակցության բանկի (ՃՄՀԲ) (JBIC) կողմից: Սակայն 2008 թ. վերոնշյալ կազմակերպությունները միավորվեցին՝ ստեղծելով նոր «Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն» (ՃՄՀԳ) (New JICA):

Հատկանշական է, որ տրամադրվող աջակցության տեսակը որոշվում է հաշվի առնելով օգնություն ստացող երկրների եկամուտները, Համախառն Ներքին Արտադրանքի մակարդակը, ինչպես նաև՝ տնտեսական զարգացվածությունը [ODA by Region Central Asia and the Caucasus]: Այսպես՝ դրամաշնորհային աջակցությունը, որն անհատույց օգնություն է տնտեսապես թույլ պետություններին, Ճապոնիան տրամադրում է ոչ կայուն տնտեսական աճ արձանագրող, ցածր ՀՆԱ ունեցող պետություններին: Փոխառությունը կամ վարկերը տրամադրվում են հաստատուն տնտեսական աճ արձանագրած զարգացող երկրներին, իսկ տեխնիկական աջակցությունը՝ բարձր ՀՆԱ ունեցող երկրներին, որոնց անհրաժեշտ է տեխնիկական սարքավորումների տրամադրմամբ խթանել և զարգացնել տնտեսական, տրանսպորտային և այլ ենթակառուցվածքները:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հարավային Կովկասում հասկանալու համար ուսումնասիրել ենք Ճապոնիայի կառավարության կողմից տարածաշրջանի երկրներին տրամադրվող աջակցության տեսակները և տնտեսական ոլորտների զարգացմանն ուղղված նախագծերը:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում: Հայ-ճապոնական հարաբերություններն ունեն մի քանի դարյա պատմություն և բավական խորը հիմքեր, ինչն առանձնացնում է Հայաստանին տարածաշրջանի մյուս երկրներից:

[1*] ՊԶԱ-ն ծրագիր է, որի միջոցով զարգացած երկրները տրամադրում են աջակցություն զարգացող երկրներին: 1964 թ. Ճապոնիան, միանալով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը (ՏՀԶԿ), ազդարարեց ճապոնական արտասահմանյան աջակցությունների մեկնարկի մասին: 20 տարի անց Ճապոնիան դարձավ ՊԶԱ-ի ամենամեծ դոնորը, իսկ 1991 թ. ամենամեծ երկկողմանի աջակցության դոնորը՝տրամադրելով ընդհանուր աջակցության 20%-ը [DAC in Dates, 2006):

Հայ-ճապոնական առնչությունների վերաբերյալ վկայություններ են մեզ հասել դեռևս 19-րդ դարից, որոնք մեծ մասամբ վերաբերել են առևտրային ոլորտին և հնդկահայ առևտրականների գործունեությանը Ճապոնիայում:

1919 թ. Ճապոնիան առաջին պետությունն էր, որ ճանաչեց Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը և Ճապոնիայում՝ որպես Հայաստանի հյուպատոս նշանակվեց գրող և հրապարախոս Դիանա Աբգարը [Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 171]:

1922 թ. Ճապոնիայում բացվեց միջազգային մարդասիրական աջակցություն տրամադրող առաջին հիմնադրամը՝ «Հայ օգնության ֆոնդ»–ը (The Armenian relief fund)՝ Օսմանյան կայսրության ոճրագործություններից ողջ մնացած հայերին զորակցություն տրամադրելու նպատակով [Babkenian, 2010]: Հիմնադրամի ղեկավար էր նշանակվել ճապոնացի առաջատար դրամատեր և արտգործնախարարության փոխնախագահ Էիչի Շիբուսավան:

Ճապոնացի ժողովրդի աջակցությունը հայերին չի սահմանափակվել միայն դրամական աջակցությամբ: Մեծ երախտագիտության է արժանի նաև 1922 թ. սեպտեմբերին Զմյուռնիայի քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների ու ասորիների նկատմամբ Օսմանյան կայսրության կողմից դաժան ոճրագործությունից հրաշքով փրկված խուճապահար տարագիրներին ճապոնական «Տոկեի Մարու» կոչվող նավով Հունաստան տարհանելը [17 Sep 1922: The Brave Stance of the Japanese]:

Ճապոնիայի աջակցությունը հայերին շարունակվեց նաև Խորհրդային Միության տարիներին: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո Ճապոնիան նյութական և դրամական զգալի օգնություն տրամադրեց Հայաստանին, ինչպես նաև Սպիտակ քաղաքի վերականգնման և վերակառուցման նպատակով երեք անգամ աղետի գոտի ուղարկեց ճապոնացի մասնագետներին [Nazarmuhamedov, 2018, 176]:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց անմիջապես հետո՝ 1992 թ. հոկտեմբերին Հայաստանի պաշտոնական պատվիրակությունն այցելեց Ճապոնիա՝ նորանկախ պետություններին մարդասիրական և տեխնիկական օգնությանը նվիրված միջազգային համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար: Նույն թվականին Հայաստանը միացավ նոր ստեղծված ԱՊՀ երկրներին օգնության կազմակերպման նպատակով Ճապոնիայի հետ ստորագրված «Օժանդակության հանձնաժողովի ստեղծման մասին» համաձայնագրին՝ դրանով իսկ սկիզբ դնելով երկկողմ տնտեսական հարաբերություններին: Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում զարգացել է երեք փուլով: **Առաջին փուլի** ընթացքում Ճապոնիայի կառավարությունը ՀՀ-ին տրամադրել է միայն դրամաշնորհներ առանց մարման որևէ պարտավորության՝ պայմանավորված երկրում ստեղծված ծանր տնտեսական վիճակով և ՀՆԱ-ի ոչ կայուն աճով: Այսպես՝ 1993-1994թթ. որպես արտակարգ օգնություն Ճապոնիայի կառավարությունը Հայաստանին տրամադրեց 4 մլն ԱՄՆ դոլար, որից 1 մլն օգտագործվեց նավթ գնելու, 2 մլն-ը՝ դեղորայք և բժշկական սարքավորումներ, իսկ մնացած 1 մլն՝ էլեկտրական մալուխների ձեռքբերման համար [Հարությունյան, 2021, 168]:

Ընդհանուր առմամբ՝ վերջին 30 տարվա ընթացքում Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանին հատկացվել է 3 տեսակի դրամաշնորհ՝ ոչ-նպատակային դրամաշնորհ, դրամաշնորհային աջակցություն գյուղատնտեսական սարքավորումների ու պարարտանյութերի

ձեռքբերման և նպատակային դրամաշնորհ՝ առողջապահության, սոցիալական և կրթական ոլորտների զարգացման նպատակով [Հարությունյան, 2022, 101-111]:

Ոչ նպատակային դրամաշնորհային ծրագիր Հայաստանում Ճապոնիան իրականացրել է մեկ անգամ (1997-1998թթ.)՝ տրամադրելով 500 մլն իեն, որի արդյունքում Հայաստան ներկրվեց նավթամթերք, տպագրական թուղթ, մինի տպարան, փշալար, մարդատար միկրոավտոբուսներ և փոքր տարողությամբ բեռնատարներ [Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 78]:

Նպատակային դրամաշնորհներն ուղղված են թիրախավորված ոլորտների զարգացմանը՝ նպատակ ունենալով բարելավել ***առողջապահության, սոցիալական ոլորտի ծառայությունները և պահպանել պատմամշակութային արժեքները***:

Առողջապահության բնագավառում Ճապոնիայի կառավարության կողմից իրականացված ծրագրերից են՝ 1998/1999 ֆինանսական տարվա համար նախատեսված «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի բուժսարքավորումների արդիականացման ծրագիրը (5.395.000 ԱՄՆ դոլար), որն ավարտին հասցվեց 2001 թ. մարտին՝ հիվանդանոցը համալրելով նոր սարքավորումներով: Բուժսարքավորումների արդիականացման հերթական ծրագրերից էին նաև Հակատուբերկուլյոզային հանրապետական, «Նորք» մանկական ինֆեկցիոն, Երևանի թիվ 3 շտապօգնության մանկական հիվանդանոցների համապատասխան սարքավորումներով համալրումը (շուրջ 5 մլն ԱՄն դոլար) [Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 79] և այլն:

Սոցիալական ոլորտի բարելավման նպատակով տրամադրվել են դրամաշնորհներ գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի գնման (2011թ.) [Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում...], հրշեջ ծառայությունների և հակահրդեհային սարքավորումների (2017թ.) [Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project "The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City"], թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու (2021թ.) [Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն] նպատակով և այլն:

Մշակութային դրամաշնորհային աջակցություն տրամադրվել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (1999թ.), Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի (2004 թ.), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների (2008 թ.), ինչպես նաև 2001 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան) պատմական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված սարքավորումների ձեռքբերման նպատակով:

«Հիմնարար» ("Grassroots") դրամաշնորհային ծրագրերը նույնպես Ճապոնիայի կառավարության ՊԶԱ ծրագրի մաս են կազմում, որի շրջանակում մինչ օրս իրականացրվել են այնպիսի ծրագրեր, ինչպիսին են՝ Մարտունի քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի վերականգնումը (67 հազար ԱՄՆ դոլար), հաշմանդամ երեխաներին պրոթեզավորման օգնությունը (50.5 հազար ԱՄՆ դոլար), մանկական բժշկական սարքավորումների տրամադրումը

(46 հազար ԱՄՆ դոլար), Գեղարքունիքի մարզի դպրոցների կահավորումը (79 հազար ԱՄՆ դոլար) և այլն: 2008 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին կրկին շնորհվեց մշակութային դրամաշնորհ, այս անգամ «Grassroots» ծրագրի միջոցով: Մշակութային դրամաշնորհներ են տրամադրվել նաև Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուների վերականգնման համար սարքավորումների վերազինման (2009թ.), Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման (2017թ.) [Japan International Cooperation Agency (JICA] Signed on Grant Agreement with Armenia], Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտական արվեստի վերականգնման և պահպանման համար նախատեսված սարքավորումների բարելավման (2018 թ.] [Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia] նպատակով:

24 տարվա ընթացքում (1999-2022թթ.) Ճապոնիայի կառավարության «Հիմնարար» դրամաշնորհների շնորհիվ ՀՀ-ում ֆինանսավորվել են 95 նախագիծ՝ 7.500.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ [Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP)], իսկ ընդհանուր դրամաշնորհային աջակցությունը կազմել է 82.861.607 ԱՄՆ դոլար [Japan's Development Cooperation with the Republic of Armenia, 2019]:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականության **<u>երկրորդ փուլի</u>** սկիզբը դրվեց 1997 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած դոնոր երկրների հերթական խորհրդաժողովի ընթացքում՝ ՀՀ և Ճապոնիայի պատվիրակությունների միջև Ճապոնիայի ***Զարգացման պաշտոնական աջակցության*** ծրագրի շրջանակներում ***Իենային արտոնյալ վարկերի գծով*** **<u>առաջին փաստաթղթի</u>** ստորագրմամբ: Արդեն 2000 թ. Ճապոնիայի կառավարությունը Համաշխարհային բանկի միջոցով (ըստ 1999 թ. փետրվարի 18-ին Տոկիոյում ստորագրված վարկային համաձայնագրի) Հայաստանին տրամադրեց **<u>առաջին փոխառությունը</u>** (5 մլրդ 399 մլն ճապոնական իեն)՝ «Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգման ծրագրի» իրականացման նպատակով [Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 71]:

Հայ-ճապոնական հարաբերությունների հետագա զարգացման, գործնական համագործակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, կառավարական և մասնավոր ներդրումների իրականացումը համակարգելու, այդ թվում՝ Զարգացմանն ուղղված Ճապոնիայի պաշտոնական օգնության ծրագրերն իրականացնելու նպատակով 2000 թ. հուլիսին Երևանում ստեղծվեց ***Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեն***, որի կազմում ընդգրկվեցին ՀՀ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ՀՀ մասնավոր ոլորտը ներկայացնող արդյունաբերողներ և գործարարներ: Արդեն 2000 թ. օգոստոսին Տոկիոյում հիմնադրվեց ***Ճապոնա-հայկական տնտեսական համագործակցության կոմիտեն***, որի կազմում, ի տարբերություն Հայ-ճապոնական կոմիտեի՝ ընդգրկվեցին միայն մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ: Երկու կոմիտեների առաջին համատեղ նիստը տեղի ունեցավ Տոկիոյում 2001 թ. հունիսի 27-ին, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ տնտեսական համագործակցությանը, մասնավորապես՝ ՀՀ-ում ճապոնական ներդրումների խրախուսմանը, առավել հեռանկարային բնագավառներում համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, բարձր տեխնոլոգիայի ոլորտում համագործակցության հաստատմանը, շփումների ակտիվացմանն ու կապերի ընդլայնմանը վերաբերող հարցեր [Nazarmuhamedov, 2018, 177]: Այս համաձայնագիրը նոր շունչ հաղորդեց երկու

երկրների տնտեսական հարաբերություններին մարդասիրական օգնությունից, դրամաշնորհների և վարկերի տրամադրման քաղաքականությունից ուղղակի ներդրումների միջոցով լիաժեք և փոխշահավետ համագործակցության անցմանը՝ ակտիվացնելով տնտեսական համագործակցությունը: Արդեն, 2001 թ. սեպտեմբերին ճապոնացի փորձագետների առաջին պատվիրակությունը ժամանեց Հայաստան՝ «Երևան քաղաքի ճանապարհների վերականգման» նախագծի իրականացման նպատակով: Ծրագիրն ավարտին հասցվեց 2003 թ. աշնանը [Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 80]:

2001 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն առաջին անգամ պաշտոնական այցով ժամանեց Ճապոնիա, որի ընթացքում հանդիպեց Ճապոնիայի վարչապետ Ջունիչիրո Կոիզումիի հետ: Հանդիպումից հետո ստորագրվեց համատեղ հայտարարություն «Հայաստանի և Ճապոնիայի միջև բարեկամության և գործընկերության մասին», որում կողմերը համաձայնվեցին ամրապնդել համագործակցությունն ահաբեկչության դեմ մղվող պայքարում, ջանքեր գործադրել միջուկային զենքի փորձարկումներն արգելելու ուղղությամբ, ինչպես նաև զարգացնել հարաբերությունները քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում [Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia]:

Այս պայմանագիրը մեծ նշանակություն ունեցավ երկկողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման հարցում, քանի որ Ճապոնիան օգնության ծրագրերից անցնում կատարեց համագործակցության և զարգացման ծրագրերի իրականացմանը՝ բարենպաստ նախապայմաններ ստեղծելով ՀՀ-ում ճապոնական ուղղակի ներդրումների և տնտեսական այլ ծրագրերի իրականացման համար: Վերոնշյալ այցի ընթացքում ստորագրվեցին նաև 2 հայտարարագրեր՝ Ճապոնիայի կառավարության ԶՊԱ ծրագրի ներքո Հայաստանում բժշկական և մշակութային դրամաշնորհային նախագծերի իրականացման, ինչպես նաև ստորագրվեց համաձայնագիր՝ Հայաստանի հանքային արդյունաբերության զարգացման վերաբերյալ [Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, 2001]:

2005 թ. Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանին տրամադրվեց **<u>երկրորդ փոխառությունը</u>**՝ «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) (ՀՇԳՑԷ) նախագծի» իրականացման նպատակով [Activities in Armenia, JICA's Projects in Armenia]: ՃՄՀԲ-ը ՀՀ կառավարությանը տրամադրեց ԶՊԱ վարկ (15 մլրդ 918 միլիոն ճապոնական իեն) արտոնյալ պայմաններով՝ 0,75 % տարեկան տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին արտոնյալ) ժամկետով: Համաձայնագրով նախատեսվում էր հանրապետության մայրաքաղաքի միակ ջերմաէլեկտրակայանին հարակից տարածքում կառուցել գերժամանակակից, բարձրարտադրողական, բարձրարդյունավետ, բնապահպանական տեսակետից ավելի անվտանգ, լրիվ ավտոմատ կառավարմամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայան 205 ՄՎտ անվանական հզորությամբ և 103 ԳԿալ/ժ ջերմության առաքմամբ, որի նպատակն էր բարձրացնել ՀՀ-ում էլեկտրաէներգիայի մատակարարման հզորությունը և նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման աճին:

Երևանի ՀՇԳՑԷ-ի նախագծի իրականացման համար խորհրդատու էր ընտրվել ճապոնական «Tokyo Electric Power Service Co., Ltd.» (TEPSCO) ընկերությունը, որն

արտասահմանում համանման էլեկտրակայանների կառուցման մեծ փորձ ունի: «TEPSCO» ընկերության կողմից խորհրդատվական ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց, որի իրականացման համար ճապոնական կողմը հատկացրեց լրացուցիչ 843 մլն 150 հազար ճապոնական իեն:

ՀՇԳՑԷ-ի նախագծի կառուցումն իրականացրեց «Mitsui & Co., LTD» (Ճապոնիա) և «GS Engineering and Construction Corp.» (Կորեայի Հանրապետություն) ընկերություններից կազմված կոնսորցիումը, որի համար Ճապոնիան տրամադրեց **<u>լրացուցիչ փոխառություն</u>**՝ 26 մլրդ 409 միլիոն ճապոնական իեն (10 մլրդ 491 մլն ԱՄՆ դոլար) չափով:

Արդեն 2010 թ. ավարտին հասցվեց Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի կառուցման աշխատանքները և տեղի ունեցավ հանդիսավոր բացումը: Լինելով հանրապետության մայրաքաղաքի միակ ջերմաէլեկտրակայանը՝ Երևանի ՋԷԿ-ը երկար տարիներ ի վեր ապահովում է քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի ձեռնարկությունների, ինչպես նաև Շենգավիթ և Էրեբունի համայնքների բնակելի թաղամասերի կենտրոնացված ջեռուցումը տաք ջրի մատակարարման միջոցով («Երևանի ՋԷԿ» ՓԲԸ):

Այսպիսով, Ճապոնիան 1999 – 2019 թթ. ընթացքում Հայաստանին տրամադրել է ընդհանուր առմամբ ***<u>3 փոխառություն</u>***՝ «Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգման ծրագրի» և երկու փոխառություն՝ «Երևանի ՀՇԳՑԷ-ի նախագծի» իրականացման համար, որը կազմել է 284 մլն ԱՄՆ դոլար (31 մլրդ 808 մլն ճապ. իեն) [Japan's Development Cooperation with the Republic of Armenia]:

Ճապոնիայի՝ Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության **<u>երրորդ փուլն</u>** ազդարարվեց 2005 թ. հունիսի 8-ին Ճապոնիայի կառավարության և ՀՀ-ի միջև կնքված համաձայնագիրը, որը սկիզբ դրեց երկկողմանի ***տեխնիկական համագործակցությանը*** [Agreement on Technical Cooperation between the Government of Japan and the Government of the Republic of Armenia]: Այսպես՝ Ճապոնիայի կառավարության կողմից կյանքի է կոչվել Մոր և մանկան առողջության / վերարտադրողական առողջության (2004-2006թթ.), Սողանքներից տուժած համայնքների զարգացման (2004-2006) («Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային Համագործակցության Գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին), Փոքր և միջին ձեռնարկությունների մարդկային ռեսուրսների զարգացման (2005-2008), Սեյսմիկ ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման պլանավորման (2010-2012), Տեղական արտադրության զարգացման և տեղական ապրանքանիշերի խթանման (2013-2016), Սողանքային աղետների կառավարման (2014-2017), Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար նախատեսված գերժամանակակից սարքավորումների տրամադրման վերաբերյալ (2021թ.) (Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը) նախագծերն ու ծրագրերը [Activities in Armenia, JICA's Projects in Armenia]:

Հարկ է նշել, որ Ճապոնիան, բացի երկկողմանի աջակցությունից, Հայաստանին տրամադրում է նաև <u>բազմակողմանի աջակցություն</u>, մասնավորապես՝ Ասիական Զարգացման

բանկի (ԱԶԲ), Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի միջոցով: Այսպես՝ 2005 թվից սկսած, երբ Հայաստանը միացավ ԱԶԲ-ին, Ճապոնիան ԶՊԱ ծրագրի շրջանակներում իրականացրել է 8 նախագիծ (տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, առողջապահության, քաղաքային ենթակառուցվածքների ու ծառայությունների ոլորտներում) ՝ ընդհանուր $606.5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ: Ավելին՝ 2020 թ. ԱԶԲ-ի միջոցով Ճապոնիան 2 մլն դոլարի դրամաշնորհ տրամադրեց Հայաստանի Հանրապետությանը՝ կորոնավիրուս հիվանդության կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար: ԱԶԲ-ը նաև 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ հատկացրեց Հայաստանի էլեկտրական ցանցերին՝ համաճարակի ընթացքում էլեկտրաէներգիայի կենսական պաշարների ապահովման նպատակով, ինչպես նաև տրամադրեց 500.000 ԱՄՆ դոլար՝ անձնական պաշտպանիչ սարքավորումներ և այլ բժշկական պարագաներ ձեռք բերելու և 750.000 ԱՄՆ դոլարի տեխնիկական օժանդակություն՝ ՀՀ-ում հեռակա ուսուցման հարթակ մշակելու և համաճարակի պայմաններում շարունակական որակյալ կրթություն ապահովելու համար [Armenia and ADB]:

Ճապոնիան Համաշխարհային բանկի միջոցով Հայաստանին տրամադրել է ֆինանսական աջակցություն՝ գյուղատնտեսության զարգացման, աղետների ռիսկի կանխարգելման, ինչպես նաև Հայաստանում աղքատ և խոցելի անձանց կենսաապահովման մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար [Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն]:

Բազմակողմանի աջակցության տրամադրման շրջանակներում Ճապոնիան ՄԱԿ-ի Մարդու անվտանգության հավատարմագրային հիմնադրամի միջոցով տրամադրել է օժանդակություն Հայաստանի սոցիալապես անապահով ընտանիքներին, փախստականներին և ներքին տեղահանվածներին [Assistance by the United Nations Trust Fund for Human Security to the Project..., 2009], ինչպես նաև ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի միջոցով՝ աջակցելով արևային էներգիայի զարգացմանը Հայաստանի մի շարք համայնքներում [Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն]:

Երկկողմանի հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը նոր երանգ հաղորդեց 2018 թ. փետրվարի 14-ին Հայաստանի և Ճապոնիայի միջև ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիրը [Ստորագրվեց Հայաստանի և Ճապոնիայի միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը]: Հայաստանն առաջինն է տարածաշրջանի երկրներից, ում հետ Ճապոնիան ստորագրեց ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիր՝ խթանելով երկու բարեկամ երկրների միջև տնտեսական փոխգործակցությունը: Համաձայնագրի շնորհիվ ստեղծվեց իրավական հիմք Հայաստանում՝ ճապոնական ներդրումների խթանման համար:

Այս պահին կա երկու ծրագիր, որոնք իրականացվում են ՃՄՀԳ-ի կողմից Հայաստանում՝ 1. «Ճգնաժամային հաղորդակցության բարելավման և աղետների ռիսկի նվազեցման հանրային իրազեկման ծրագիրն է», որի նպատակն է ուժեղացնել Արտակարգ իրավիճակների նախարարության և ԶԼՄ-ների ճգնաժամային հաղորդակցման կարողությունները՝ արտակարգ

իրավիճակների ժամանակ ճիշտ տեղեկատվություն տրամադրելու համար, 2. «Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS) ոլորտի գործարար համագործակցության ամրապնդման նախագիծն է», որի նպատակն է խթանել Հայաստանի SS ոլորտի և ճապոնական ոլորտների միջև գործարար համագործակցությունը [Japan's JICA notes prospects of cooperation with Armenia in ICT]:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունն Ադրբեջանում: Ադրբեջանը Եվրասիա տարածաշրջանի Հարավային Կովկասում գտնվող տարածքային առումով ամենամեծ պետությունն է: Ադրբեջանում Ճապոնիան շահագրգռված է երեք հիմնական ոլորտների զարգացման ուղղությամբ՝

1) Տնտեսական ենթակառուցվածքների բարելավման, մասնավորապես՝ էներգետիկ և տրանսպորտային ոլորտների զարգացման,

2) Առողջապահության և բժշկական օգնության ծառայությունների, մասնավորապես՝ բժշկական կրթության որակի բարելավման,

3) Մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ [Japan International Cooperation Agency, Azerbaijan]:

1996 թվականից ՃՄՀԳ-ը սկսեց դրամաշնորհային աջակցություն տրամադրել Ադրբեջանին՝ պարենային անվտանգության ծրագրի համար: Այսպես՝ 15 տարվա ընթացքում (1996-2011թթ.) ՃՄՀԳ-ը պարենային անվտանգության ծրագրի իրագործման համար Ադրբեջանին տրամադրել է 9 դրամաշնորհ: 1999 - 2013 թվականների ընթացքում 7 դրամաշնորհային օգնություն է տրամադրվել բժշկական սարքավորումների ձեռքբերման, ոռոգման համակարգերի բարելավման, մայրուղու վերականգնման, ինչպես նաև ենթակայանի վերակառուցման համար: 2015-2020 թթ. ՃՄՀԳ-ն իրականացրել է 23 «Մինի դրամաշնորհային ծրագրեր»՝ հիմնականում բժշկական և գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման, էներգետիկայի, ոռոգման և ճանապարհների կառուցման, գյուղերում արևային համակարգերի զարգացման և այլ ծրագրերի իրագործման համար [JICA's Grant Aid Projects in Azerbaijan]: Այսպիսով, ՃՄՀԳ-ն ընդհանուր առմամբ հատկացրել է 10 մլրդ 247 մլն իեն (2023 թ. հունվար ամսվա փոխարժեքով՝ մոտ 79 մլն դոլար)՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման համար:

Ադրբեջանի հետ համագործակցության սկզբից մինչ օրս Ճապոնիայի կառավարությունը տրամադրել է 101 մլրդ 200 մլն իենի (2023 թ. հունվար ամսվա փոխարժեքով՝ մոտ 780 միլիոն դոլար) փոխառություն՝ էներգետիկայի, ջրամատակարարման և կոյուղու բարելավման նպատակով: Առաջին փոխառությունը տրամադրվել է 1998 թ.՝ «Սևերնայա» գազային համակցված ցիկլով էլեկտրակայանի կառուցման նպատակով, որն արժեցել է 20,699 մլն իեն: Այս ծրագրի նպատակն էր կառուցել գազային համակցված ցիկլով էլեկտրակայան (400 ՄՎտ) գործող ՋԷԿ-ի փոխարեն: Երկրորդ փոխառությունը (18332 մլն իեն) տրվել է 1999 թվականին՝ որպես շարունակական աջակցություն «Սևերնայա» գազային համակցված ցիկլով էլեկտրակայանի նախագծին: Կայանի շինարարությունն ավարտվել է 2005 թ. [First Power Project Applying Preferential Interest Rate for Special Environmental Projects; Japan Bank for International Cooperation Provides the First ODA Loan]: Երրորդ վարկը տրամադրվել է 2005 թ. (մոտ 29,28 մլրդ իեն)՝ «Շիմալ գազային համակցված ցիկլային էլեկտրակայանի» կառուցման համար [JBIC Signs ODA Loan Agreement with Azerbaijan Government]: Ծրագիրն նախատեսվում է ավարտին հասցնել 2023 թ.: Չորրորդ փոխառությունը (32,851 միլիարդ իեն արժողությամբ) Ճապոնիան Ադրբեջանին

տրամադրեց 2009 թ.՝ Ադրբեջանի 10 խոշոր քաղաքներում (Բարդա, Գոբուստան, Խաչմազ, Խիզի, Նաֆթալան, Նեֆչալա, Քուսար, Սալյան, Շիրվան և Եվլախ) ջրամատակարարման և կոյուղու նախագծի իրականացման համար: Այս պահին դեռևս 5 քաղաքներում են (Նաֆթալանում, Գոբուստանում, Խաչմազում, Խիզիում, Քուսարում) ավարտին հասցվել ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները [Japanese ODA Loan Agreement with Azerbaijan]:

2022 թ. օգոստոսի 2-ին ՃՄՀԳ-ի և «Մասդար Ազերբայջան Էներջի» ՍՊԸ-ի միջև ստորագրվել է Գարադաղի արևային էներգիայի ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը, որը համաֆինանսավորվում է նաև Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի կողմից: Ըստ այդ համաձայնագրի՝ Ադրբեջանի արևելքում գտնվող Ալաթ բնակավայրի մոտակայքում նախատեսվում է կառուցել 230 մեգավատտ հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) արևային էլեկտրակայան [Signing of a Loan Agreement for Garadagh Solar Power Project in Azerbaijan]:

Ինչ վերաբերում է տեխնիկական աջակցության տրամադրմանը, ապա Ճապոնիայի կառավարությունը տեխնիկական համագործակցության շրջանակում Ադրբեջանի պաշտոնյաների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ Ճապոնիայում: Այսպես՝ 1995 թվականից մինչ օրս Ադրբեջանի կառավարության ավելի քան 600 պաշտոնյաներ Ճապոնիայում մասնակցել են տարբեր դասընթացների, որի նպատակն է ճապոնական փորձի փոխանակումը՝ մոր և մանկան առողջության պահպանման, գյուղատնտեսության, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացման, քաղաքային հասարակական տրանսպորտի և քաղաքային ջրամատակարարման համակարգերի, ինչպես նաև փրկարարական տեխնիկայի բարելավման, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման և այլ ոլորտների մասնագետների համար: Ընդհանուր առմամբ՝ Ադրբեջանին տրամադրվել է 3 մլրդ 596 մլն իենի (2023 թ. հունվարի փոխարժեքով՝ մոտ 28 մլն դոլար) տեխնիկական աջակցություն [Harutyunyan, 2022, 100]:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Վրաստանում: Վրաստանը, լինելով ծովային և ցամաքային դարպաս դեպի Եվրոպա և զբաղեցնելով կարևոր ռազմավարական դիրք Հարավային Կովկասում, մեծ դեր է խաղում տարածաշրջանի էներգակիրների փոխադրման տեսանկյունից:

Ճապոնիան 1995 թ. սկսած Վրաստանին տրամադրում է դրամաշնորհներ, փոխառություններ և տեխնիկական աջակցություն Պաշտոնական Զարգացման Աջակցության ծրագրի շրջանակներում՝ տարորոշելով աջակցության տրամադրման հետևյալ ոլորտները՝

1. գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացում,
2. առողջապահության և դեղորայքային ծառայությունների բարելավում,
3. ենթակառուցվածքների զարգացում, մասնավորապես՝ հիդրոէլեկտրոկայանների վերանորոգում,
4. ապակենտրոնացում և տարածաշրջանային զարգացում [Japan International Cooperation Agency, Georgia]:

Այսպես՝ գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման համար Ճապոնիան տրամադրում է աջակցություն դրամաշնորհների և տեխնիկական սարքավորումների տեսքով:

Գյուղական շրջանների զարգացման համար Ճապոնիան առաջարկում է կիրառել ճապոնական «Մեկ գյուղ՝ մեկ արտադրանք» հայեցակարգային մոդելը և ստեղծել տեղական ձեռնարկություններ Վրաստանում, ինչը կարող է խթան դառնալ նաև զբոսաշրջության զարգացման համար: ՃՄՀԳ-ը դրամաշնորհներ է տրամադրում նաև առողջապահության ոլորտի զարգացման համար: Հիմնական նպատակը գյուղական շրջանների բնակչության շրջանում առողջապահության և բժշկական ծառայությունների տրամադրման մակարդակի բարձրացումն է [Country Assistance Policy for Respective Countries, Georgia]: Ընդհանուր առմամբ՝ Վրաստանին տրամադրվել է 12 մլրդ իենի դրամաշնորհ:

Ճապոնիայի կառավարությունը դրամաշնորհների և փոխառությունների միջոցով իրականացնում է նաև էներգետիկ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի աճող պահանջարկը բավարարելու համար ՀԷԿ-երի վերանորոգում և արևային էներգիայի արտադրության համակարգերի տեղադրում: Այսպես՝ Ճապոնիան առաջին փոխառությունը Վրաստանին տրամադրեց 1998 թ. (5.332 մլն իեն)՝ էլեկտրաէներգիայի վերականգնման նպատակով: Այս փոխառության շնորհիվ վերանորոգվեցին և փոխարինվեցին նոր սարքավորումներով Լաջանուրի և Խրամի հիդրոէլեկտրակայանները՝ բարձրացնելով ՀԷԿ-երի արդյունավետությունը: 2010 թ. ՃՄՀԳ-ի կողմից տրամադրվեց 480 մլն իենի դրամաշնորհ՝ Թբիլիսիի միջազգային օդանավակայանում և «Իլիա պետական համալսարանում»՝ արևային էներգիայի արտադրության համակարգեր տեղադրվելու համար: Նախագիծն ավարտին հասցվեց 2016 թվականին, և Թբիլիսիի միջազգային օդանավակայանը դարձավ «մաքուր» էներգիայով աշխատող միակ օդանավակայանը տարածաշրջանում [Opening Ceremony of the grant project on “Introduction of Clean Energy by Solar Electricity Generation System”]:

Փոխառություններ են տրամադրվում նաև ապակենտրոնացման և տարածաշրջանային զարգացման նպատակով, մասնավորապես՝ կարևորվում է «Արևելք - Արևմուտք» արագընթաց ճանապարհի կառուցման նախագիծը, որի շնորհիվ ցամաքային ճանապարհներով, թունելներով և կամուրջներով իրար հետ կկապվեն Սև և Կասպից ծովերը, ինչպես նաև Եվրոպան Ասիայի հետ: Լինելով Մետաքսի ճանապարհի տրանսպորտային ցանցի կարևոր մասնիկ՝ «Արևելք - Արևմուտք» արագընթացը մեծ դեր է խաղում կովկասյան տարածաշրջանի բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների իրականացման հարցում: Հատկանշական է, որ այս ճանապարհով է իրականացվում բեռնափոխադրումների 40%-ը և ուղևորափոխադրումների՝ 90 %-ը [Signing of Japanese ODA Loan Agreement with Georgia: Strengthening competitiveness as a regional logistics hub by improving an international corridor]: Այս նախագծի առաջնահերթությունը հատկապես կարևորվեց 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո, երբ Ճապոնիան հայտարարեց Վրաստանի տնտեսության զարգացման խթանման համար 200 մլն դոլարի աջակցություն տրամադրելու պատրաստակամության մասին: Արդեն 2009 թվականին «Արևելք - Արևմուտք» արագընթաց ճանապարհի կառուցման նպատակով տրամադրվեց առաջին փոխառությունը՝ Զեստափոն քաղաքը Սամտրեդիա քաղաքին միացնելու նպատակով նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար: Այս նախագծի իրականացման համար երկրորդ փոխառությունը (4 մլրդ 41 մլն իեն) Ճապոնիայի կառավարությունը տրամադրեց 2016 թ.՝ վերոնշյալ քաղաքների միացման նպատակով ցամաքային ճանապարհի և կամուրջների կառուցման, իսկ 2018 թ. (38 մլրդ 735 մլն իեն)՝ Արգվետան քաղաքը Շորապանի գյուղաքաղաքի հետ թունելներով և կամուրջներով (մոտ

14,7կմ) իրար միացնելու համար:

Ճապոնիան աջակցում է Վրաստանին նաև փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հարցում՝ 2021 թ. տրամադրելով 100 մլն դոլարի փոխառություն [Signing of a loan agreement to support micro, small and medium-sized enterprises (MSMEs) in Georgia]: Ընդհանուր առմամբ՝ Ճապոնիայի կառավարությունը Վրաստանին տրամադրել է 80 մլրդ իեն արժողությամբ 5 փոխառություն (2023 թ. հունվարի փոխարժեքով՝ մոտ 615 մլն դոլար):

ՃՄՀԳ-ն ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Վրաստանում տեխնիկական աջակցություն տրամադրում է մասնագետների համար Ճապոնիայում վերապատրաստման դասընթացների կազմակերպման և ճապոնացի փորձագետներին Վրաստան ուղարկելու տարբերակով: Ընդհանուր առմամբ՝ Վրաստանին տրամադրվել է 2.5 մլրդ իենի տեխնիկական աջակցություն:

Այսպիսով, վերջին երեսուն տարվա ընթացքում Ճապոնիայի կառավարությունը Հարավային Կովկասի երեք երկրներին տրամադրել է համարյա հավասարաչափ դրամաշնորհային աջակցություն, մինչդեռ ամենամեծ փոխառության նախագծերն իրականացրել է Ադրբեջանում, իսկ Հայաստանին տրամադրել է համեմատաբար ամենաշատ տեխնիկական աջակցությունը (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ճապոնիայի տնտեսական աջակցությունը Հարավային Կովկասի երկրներին			
	Հայաստան	**Ադրբեջան**	**Վրաստան**
դրամաշնորհային աջակցություն	10,7 մլրդ 202 մլն իեն	10 մլրդ 247 մլն իեն	12 մլրդ իեն
փոխառություն	31 մլրդ 808 մլն իեն	101 մլրդ 200 մլն իեն	80 մլրդ իեն
տեխնիկական աջակցություն	4.686 մլրդ իեն	3 մլրդ 596 մլն իեն	2.5 մլրդ իեն

Աղբյուր՝ Country Assistance Policy for Respective Countries, Ministry of Foreign Affairs of Japan, https://www.mofa.go.jp/policy/oda/assistance/country2.html

Եզրակացություն: Ճապոնիան, Հարավային Կովկասը դիտարկելով որպես Եվրասիա մայրցամաքի մասնիկ և Ասիան Եվրոպայի հետ կապող առանցքային դարպաս, իր տնտեսական շահերի ապահովման և համաշխարհային տնտեսության կայունության պահպանման տեսանկյունից շահագրգռված է տարածաշրջանում շուտափույթ խաղաղության և տնտեսական կայունության հաստատման հարցում: Իր գործոնն այդ խնդրի լուծման մեջ տեսնում է հարավկովկասյան երեք երկրներին տնտեսական աջակցության, ենթակառուցվածքների զարգացման և գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև պետակաշինության նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով:

Դիվանագիտական հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ հաստատելուց անմիջապես հետո, Ճապոնիան նորանկախ պետություններին անհատույց տնտեսական աջակցություն ցուցաբերելով ապահովում էր պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության սահուն անցումը: Բացի այդ, Ճապոնիան ՊԶԱ ծրագրի միջոցով տրամադրում է

տարածաշրջանի երեք պետություններին դրամաշնորհային աջակցություն, փոխառություններ և տեխնիկական աջակցություն՝ նպաստելով վերջիններիս տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը: Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ կրում էր երկակի բնույթ. մի կողմից դրսևորում է անհատական մոտեցում՝ միտված աջակցելու վերջիններիս տնտեսությանը և զարգացնելու թիրախավորված ոլորտները, մյուս կողմից՝ ցուցաբերում է ընդհանրական մոտեցում, որում ակնհայտ արտահայտվում է Ճապոնիայի անկողմնակալությունը, և տարածաշրջանը միասնական ու ամբողջական մասնիկ տեսնելու իր մոտեցումը:

Գրականության ցանկ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքէջ, http://www.minenergy.am/page/531 «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային Համագործակցության Գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին, 29.03.2004, http://www.irtek.am/views/act.aspx?aid=24469

Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն, https://www.am.emb-japan.go.jp/files/100144363.pdf?fbclid=IwAR1CP17DsZkXTeODfiDllC5iwHOONRoTEwueuFGi_V2WE7uR6Rq3nlK6U8U

Հայաստանում Ճապոնիայի դեսպանը կոչ է արել ապահովել Լաչինի միջանցքի երկայնքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը, 10.01.2023, https://galatv.am/hy/3172835/?fbclid=IwAR0YsSU036xkwhGyLqQarEYWprGY1Wabmh_kpxUIhyTPJnCbLGIdoX-fhU0

Հարությունյան Ե. 2021, Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում (1992-2021թթ.), Բանբեր Արևելագիտության ինստիտուտ, Հատոր I (34), համար 2, էջ 165-184:

Հարությունյան Ե. 2022, Ճապոնիայի դերը հայերին աջակցելու և Հայաստանի տնտեսության մի շարք ոլորտների զարգացման հարցում, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, հ. 17, հ. 1, Երևան, էջ 101-117, https://doi.org/10.46991/hc.2022.17.1.101

Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. 2005, Հայաստան-Ճապոնիա. Քաղաքական, Տնտեսական, Մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, Զանգակ-97, էջ 180+144 (ճապ.):

Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն, ՀՀ Ճապոնիայի դեսպանությունը, 2017, https://www.mofa.go.jp/files/000365207.pdf

Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան տնօրինելու մասին, ՀՀ կառավարություն որոշում, 17. 02.2011թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/19075/

Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

կայքէջ, https://escs.am/am/news/9318?fbclid=IwAR3o48AtmNrAKN-LQrxdgjc3oEiwG9jJRSfe5_GJ6quy3KcirTCXjhA5vB8

Ստորագրվեց Հայաստանի և Ճապոնիայի միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը, 14.02.2018, https://www.mfa.am/hy/press-releases/2018/02/14/fm-japan-agreement/7946

Казухито Т., Евразийская дипломатия Японии (1997-2001 гг.), 28.07.2014, https://www.nippon.com/ru/features/c00205/?pnum=3

17 Sep 1922: The Brave Stance of the Japanese, https://www.greek-genocide.net/index.php/bibliography/newspapers/17-sep-1922-the-brave-stance-of-the-japanese-embros

Activities in Armenia, JICA's Projects in Armenia, Website of Japan International Cooperation Agency, https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html

Agreement between Japan and the Republic of Armenia for the Liberalization, Promotion and Protection of Investment, https://www.mofa.go.jp/files/000386842.pdf

Agreement on Technical Cooperation between the Government of Japan and the Government of the Republic of Armenia, Website of Japan International Cooperation Agency, 08.06.2005,https://www.jica.go.jp/joureikun/act/actdata/110000118/current/FormEtc/13000018001000000002.pdf

Armenia and ADB, Website of Asian Development Bank, https://www.adb.org/countries/armenia/overview

Assistance by the United Nations Trust Fund for Human Security to the Project "Sustainable Livelihood for Socially Vulnerable Refugees, Internally Displaced and Local Families" in Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 02.03.2009, https://www.mofa.go.jp/announce/announce/2009/3/1188760_1130.html

Babkenian V. 2010, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, https://armenianweekly.com/2010/11/10/cuba-china-korea-hawaii-and-the-armenian-genocide/

Country Assistance Policy for Respective Countries, Georgia, https://www.mofa.go.jp/policy/oda/assistance/country2.html#section3

DAC in Dates, The History of OECD's Development Assistance Committee, 2006, https://www.oecd.org/dac/1896808.pdf

Dadabaev T. 2013, Japan's search for its Central Asian policy, Asian Survey, Vol. 53, No. 3, pp. 506-532.

Diplomatic Bluebook, 2002, pp. 177-180, https://www.mofa.go.jp/policy/other/bluebook/2002/chap3-e.pdf

Diplomatic Bluebook, 2004, https://www.mofa.go.jp/policy/other/bluebook/2004/chap2-e.pdf

Diplomatic Bluebook, 2005, https://www.mofa.go.jp/policy/other/bluebook/2

Diplomatic Bluebook, 2006, https://www.mofa.go.jp/policy/other/bluebook/2006/07.pdf

Diplomatic Bluebook, 2019, https://www.mofa.go.jp/policy/other/bluebook/2019/html/chapter2/c020502.html

Entry into Force of the Japan-Georgia Investment Agreement, https://www.mofa.go.jp/press/release/press4e_003014.html

Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project "The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City", Webiste of Japan International Cooperation Agency, https://www2.jica.go.jp/en/evaluation/pdf/2013_0867940_4_f.pdf

First Power Project Applying Preferential Interest Rate for Special Environmental Projects, 27.02.1998, https://www2.jica.go.jp/yen_loan/pdf/en/4627/19980227-ea.pdf

Foreign Minister for Foreign Affairs Mr. Taro Kono's visit to Armenia, https://www.am.emb-japan.go.jp/itpr_ja/b_000424.html

Foreign Minister Kono Visits Armenia, Georgia, Azerbaijan and Germany (September 2-7, 2018), 06.09.2018, https://www.mofa.go.jp/erp/ca_c/page24e_000239.html

Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia, Website of Japan International Cooperation Agency, 16.02.2018, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/press180216.html

Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP), Website of Embassy of Japan in Armenia, 11.08.2021, https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_000195.html

Harutyunyan Y. 2022, JICA's activities in Armenia and Azerbaijan (comparative analysis), Eastern Asian studies, N 5, pp. 88-107, https://arar.sci.am/dlibra/publication/353365/edition/325579/content

Hosoya Y., Japan in search of a New International identity, Nippon communications foundation, October 3, 2011, https://www.nippon.com/en/features/c00201/

Japan Bank for International Cooperation Provides the First ODA Loan, 14.10.1999, https://www2.jica.go.jp/yen_loan/pdf/en/4857/19991014.pdf

Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia: The Archive of the Public Television will be Digitized, Webiste of Japan International Cooperation Agency, 30.03.2017, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/170330.html

Japan International Cooperation Agency, Azerbaijan, https://www.jica.go.jp/azerbaijan/english/index.html

Japan International Cooperation Agency, Georgia, https://www.jica.go.jp/georgia/english/index.html

Japan's Development Cooperation with the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, https://www.mofa.go.jp/files/000476406.pdf

Japan's JICA notes prospects of cooperation with Armenia in ICT, https://armenpress.am/eng/news/1061097/

Japanese ODA Loan Agreement with Azerbaijan, Water Supply and Sewer System Improvements for Core Cities, 01.06.2009, https://www2.jica.go.jp/yen_loan/pdf/en/5898/20090601.pdf

JBIC Signs ODA Loan Agreement with Azerbaijan Government: Supporting Construction of Gas Combined-Cycle Power Plant Will Serve to Strengthen the Base of Economic Development, 13.05.2005, https://www2.jica.go.jp/yen_loan/pdf/en/5427/20050513.pdf

JICA's Grant Aid Projects in Azerbaijan, https://www.jica.go.jp/azerbaijan/english/activities/activity01.html

Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 19.12.2001, https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html

Len Ch., «Understanding Japan's Central Asian Engagement», in Japan's Silk Road diplomacy: Paving the road Ahead, Washington D.C., Central Asia-Caucasus Institute and Silk road studies program, 2008, https://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2008_12_BOOK_Len-Tomohiko-Tetsuya_Japan-Silk-Road-Diplomacy.pdf

Nazarmuhamedov B. 2018, Japan's ODA Policy towards Central Asia and the Caucasus, Journal of International and Advanced Japanese studies, vol. 10, pp. 169-184.

New JICA, https://www.jica.go.jp/english/publications/jica_ archive/brochures/pdf/newjica2009.pdf

ODA by Region Central Asia and the Caucasus, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 16.08.2021, https://www.mofa.go.jp/policy/oda/page_000010.html#armenia

On the "Arc of Freedom and Prosperity". An Address by H.E. Mr. Taro Aso, Minister for Foreign Affairs on the Occasion of the 20th Anniversary of the Founding of the Japan Forum on International Relations, Inc., 12.03.2017, https://www.mofa.go.jp/policy/pillar/address0703.html

Opening Ceremony of the grant project on "Introduction of Clean Energy by Solar Electricity Generation System", https://www.ge.emb-japan.go.jp/files/opening%20ceremony/solar%20_eng.pdf

Signing of a loan Agreement for Garadagh Solar Power Project in Azerbaijan (Private Sector Investment Finance): Contributing to achievement of the Paris Agreement goals and promotion of renewable energy in the oil-producing country, 03.08.2022, https://www.jica.go.jp/english/news/press/2022/20220803_30.html

Signing of a loan agreement to support micro, small and medium-sized enterprises (MSMEs) in Georgia (Private Sector Investment and Finance), 10.12.2021, https://www.jica.go.jp/english/news/press/2021/20211210_10e.html

Signing of Japanese ODA Loan Agreement with Georgia: Strengthening competitiveness as a regional logistics hub by improving an international corridor, 08.03. 2016, https://www2.jica.go.jp/yen_loan/pdf/en/6671/20160308.pdf

Signing of the Tax Convention between Japan and Azerbaijan, 27 December, 2022, https://www.mofa.go.jp/press/release/press4e_003203.html

Statement by Mr. Masahiko Koumura, Minister for Foreign Affairs, on the Situation in Georgia and South Ossetia, 09.09.2008, https://www.mofa.go.jp/announce/announce/2008/9/1183269_1050.html

Statement of the Embassy of Japan in Georgia on the so-called "parliamentary elections" in Abkhazia, 29.03.2022, https://www.ge.emb-japan.go.jp/itpr_ja/11_000001_00282.html

The Armed Confrontation along the contact line of Nagorno-Karabakh (Statement by Press Secretary Yoshida Tomoyuki), 28.09.2020, https://www.mofa.go.jp/press/release/press4e_002916.html

Yuasa T. 2007, Japan's Multilateral Approach toward Central Asia, pp. 65-84, https://src-h.slav.hokudai.ac.jp/coe21/publish/no16_1_ses/04_yuasa.pdf